11.qxd 23/12/2020 14:43 Page 1

ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ

1+1

Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թ. թիվ 11 (21)

ՈՒԶՈՒՄ ԵՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՐԱՍՏՎԻ'Ր ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ



ԱՐՍԵՆ

Վարդենիկ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Սեւանա լճի հարավային ափին, Վարդենիսի լեռնաշղթայի ստորոտում: Գյուղական բնակչության քանակով համարվում է երկրորդը մեր հանրապետությունում, Ներքին Գետաշենից հետո: 1828 թվականին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Սասուն և Մուշ գավառներից գաղթած մեր հայրենակիցները հիմնել են գյուղը: Համայնքը պետության զարգացմանը նպաստում է ոչ միայն մշակույթի, գյուղատնտեսության, անասնապահության կամ տնտեսական աճի ոլորտներում, այլ նաև՝ հայրենիքի պաշտպանության գործում:

1992-1994 թվականների Արցախյան առաջին պատերազմի ժամանակ հայոց բանակի շարքերում թշնամու դեմ մաքառեցին վարդենիկցի բազմաթիվ քաջորդիներ՝ իրենց անունները փառքով պսակելով ռազմաճակատների տարբեր հատվածներում:Վարդենիկցի կամավորների ջոկատը հպարտորեն կրում էր «Գայլավաշտ» անվանումը: Վարդենիկցիներն աչքի ընկան նաեւ Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ:

2020 թվականի սեպտեմբերի 27-ի հայ-ադրբեջանաթուրքական պատերազմի մասնակցությանը անմասն չմնացին Վարդենիկի զավակները, ովքեր հայրենիքին իրենց պարտքը կատարելիս և սխրանքներ գործելիս անմահացան, իրենց երազանքները կիսատ թողեցին, բայց պայքարելու հզոր ոգին թողեցին իրենց հարազատներին. նրանք շարունակում են իրենց պապերի գործը. փառք ու պատիվ մեր հերոսներին՝

Աբրոյան Արսեն Ռուբիկի
Արշակյան Տիգրան Խաչիկի
Ավետիսյան Հարութ Աշոտի
Մինասյան Արմեն Սմբատի
Օհանյան Վահան Սուրիկի
Գևորգյան Հակոբ Ասատուրի
Այվազյան Արտաշես Ռուստամի
Մխոյան Սերգեյ Լյուդվիգի

Ալաշկերտ գավառի Ուրուքենդ գյուղից Վարդենիկ գաղթած Աբրոյանների տոհմը նորից պայքարի ելավ հայրենիքի պաշտպանության համար: Ռուբիկ և Անժելա Աբրոյանների որդին՝ Արսենը, զորակոչվել էր հայոց բանակ և իր պարտքն էր կատարում Մեղրիի տարածաշրջանի Ագարակի զորամասում: Մասնակցել է հայ-ադրբեջանաթուրքական պատերազմին: Մայրը՝ տիկին Անժելան, արցունքները խեղդելով պատմում էր հերոս որդու մասին, նշում էր, որ նա տարբերվում էր մյուսներից, հարգում էր մեծերին, աշխատասեր էր, լսող և շատ խելացի: Արսենը, երբ 7 տարեկան է լինում, վայր է ընկնում և վնասում բրոնխատար անոթները: Երբ ուշքի է գալիս, տեսնում է, որ մայրը լաց է լինում, ինքը փորձում է հանգստացնել մորը, սրբում է արցունքները, թեև զգում է, որ իր ձայնը տարօրինակ է: Մայրը երբեք չի մոռանում Արսենի խոսքերը. ասում էր. «Ուզում եմ խելոք մնալ, բայց չեմ կարողանում»: Սիրում էր զբաղվել սպորտով, ապագա բռնցքամարտիկ էր, բայց թողնում է սպորտով զբաղվելը և որոշում է օգնել ծնողներին:

Շատ տնտեսական տղա էր. այդպես են բնորոշում նրան թե՛ ընտանիքի անդամները, թե՛ մանկավարժները: Ճիշտ է, դպրոցը գերազանցությամբ չի ավարտել, բայց ունեցել է բազմաթիվ շնորհներ:Նրա մասին մեծ հիացմունքով է խոսում Վարդենիկի 1 հիմնական դպրոցի տնօրեն Թաթուլ Ալոյանը: Նա միշտ զարմացել է Արսենի ռազմահայրենասիրության վրա, պատմում է, որ ՆԶՊ-ի դասալսումների ժամերին նա միշտ զարմացրել է իր ռազմական գիտելիքներով և պատրաստվածությամբ: Մինչ կայրվեր լուցկու հատիկը, նա քանդում, հավաքում էր զենքը. դա նրա հոբբին էր:

Տիկին Անժելան պատմում է, որ երբ Սիսիանում մասնակցում է զինավարժությունների և զբաղեցնում առաջին տեղը, ծնողներին չի ասում, այդ մասին տեղյակ են լինում Տիգրանից, ով իրենց հարևանն էր և Արսենի զինակից ընկերը:

Զինակից ընկերների պատմելով՝ նա խելացի զինվոր էր, պատվով էր կատարում իրեն տրված բոլոր առաջադրանքները, լավ նռնականետորդ էր, տիրապետում էր հինգ մարտական զենքի: Պատերազմի հենց առաջին օրվանից նրան Ագարակից տեղափոխում են Զաբրայիլ, բայց նա մենակ չէր, ինչպես գյուղում և նաև զորամասում, նրա հետ էր իր անբաժան ընկերը՝ Տիգրանը: Նրանք անբաժան էին և միշտ պատվով էին դուրս գալիս ցանկացած առաջադրանքից: Երբ զինվորներին հայտնում են պատերազմի լուրը և բացատրում, որ իրենք նույնպես պետք է մեկնեն առաջնագիծ, Տիգրանը և Արսենը ինքնակամ դուրս են գալիս շարքից և հայտնում իրենց պատրաստակամ լինելու մասին: Ընտանիքի անդամներին չեն ասում, որ իրենք առաջնագծում են, երբ հոկտեմբերի 7-9-ը ընկած ժամանակահատվածում լուր չեն ունենում, մայրական բնազդը և իրավիճակի լարվածությունը մտահոգվելու տեղիք էին տալիս: Առաջնագծում երեք օր կատաղի մարտերում կռվել են թուրքերի և ահաբեկիչների դեմ:

ՏԻԳՐԱՆ

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԻՇՆՉՈՒ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՅԴՔԱՆ ՀԱՎԱՏՈՒՄ ԽՈՍՔԻՆ, ԻՍԿ ԵԹԵ ԱՅՆ ՕՏԱՐՆ Է ԱՍՈՒՄ, ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ ԵՌԱԿԻ

Պատկերացրեք՝ մենք բրինձ ենք կամ ձավար: Մեզ չեն հարցնում, թե մեզանից ինչ են պատրաստելու, կամ էլ մենք այնքան անգրագետ ենք, որ չենք ուզում հավատալ, թե ինչ կարող են մեզանից պատրաստել: Մեզ լվանում են և լցնում ջրի մեջ, մեզ եռացնում են՝ ամանի մեջ լցնելով կարտոֆիլ, կաղամբ, գազար և հազար ու մի տարբեր համեմունքներ: Մեկ է, մենք դեռ չգիտենք, թե ինչ են մեզանից պատրաստում. երբ մենք և մեր նմանները եփվում են, ավելացվում է սոխեռած, և մենք դառնում ենք համով ապուր: Երբ մոտենում է ճաշի ժամանակը, սեղանի մոտ հավաքվում են մեր բարեկամները և թշնամիները՝ մեզանից անկախ:

Մատուցողը շերեփով խառնում է ապուրը և ամեն մեկին իր հայեցողությամբ լցնում նրանց ափսեն, մեկին շատ բրինձ է պետք, մյուսին՝ շատ կարտոֆիլ, իսկ մյուսին՝ շատ գազար: Մենք, գտնվելով ափսեների մեջ, նոր ենք հասկանում , թե ում բաժինն ենք և ինչի հասանք, սկսում ենք ճչալ , բայց, ցավոք, սեղանակիցները զբաղված են իրենց գործով, նրանք այդ ճիչը համարում են որպես շնորհակալության նշան , որ մենք արժանացել ենք պատվի: Իսկ այդ թանձր շերտով բրինձը, որը նստած է կաթսայի հատակին, ունակ չէ լսելու այդ ճիչը, քանի որ ապահով նստած է կաթսայի հատակին և հուսով է, որ լավ մարդու բաժին կդառնա: Ճաշի ամանի միջի թերմացքը լցնելով մնացած մասսայի վրա՝ լցնում են ամանի մեջ և տալիս անտուն շներին: Շները մեծ գոհունակությամբ ուտում են մնացորդները և լպստում կեղտոտ ամանները՝ մտովի սպասելով մյուս անգամվան: Մենք, տեսնելով շնիկի հրճվանքը, ոգևորվում ենք. վերջապես ինչ-որ մեկին պետք եկանք ի սրտե: Եվ կենտրոնացնում ենք մեր ունեցած գիտական և մտավոր հնարավորությունները, սկսում ենք ստեղծել տարբեր գույնի բրինձներ, քանդակում ենք բրնձի հատիկների վրա, որ ավելի շատ դուր գանք շներին: Անցնում են հարյուրամյակները, բայց այդպես էլ հավատացել ենք սուտ ու քաղցր խոսքին և զոհաբերվել անսանձ արարածների համար: Հարգելի՜ ուսուցիչներ և ծնողներ, աշխարհը շատ է փոխվել, պետք չէ երեխաներին դարձնել այնպիսին, ինչպիսին դուք եք, պետք է որ նրանք սովորեն և առաջ շարժվեն աշխարհի առաջադեմ կրթական համակարգով / Սկանդինավյան երկրների, Անգլիայի, Գերմանիայի, ֆրանսիայի, Իսրայելի օրինակներով/:

Դրա համար շատ մեծ ջանք ու խելք էլ ունենալ պետք չէ, ուղղակի վերցնել ու կրկնել այն, ինչը աշխարհը ծրագրված տանում է առաջ, բայց չգիտես ինչու, մենք ձգտում ենք ստրկության. միգուցե մեր պատմությունն է սխալ, հեքիաթներն են վատը, փիլիսոփայությունն է տկար կամ մտավորականներն են նյութապաշտ: Հուսանք՝ իշխանությունները կանեն ճիշտ հետևություններ, և 22-րդ դարը կդիմավորենք որպես ազատ, անկախ, հզոր հայրենիք ունեցող մարդիկ:

Հակոբ Սարիբեկյան
Վերին Գետաշեն

ՆՐԱՆՔ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԵՐԴՄԱՆԸ

Արդեն մի քանի ամիս է, ինչ հանրապետությունում բժիշկները գիշեր ու ցերեկ առանց հանգստանալու պայքարում են՝ համավարակի և պատերազմի ժամանակ վիրավորված մարդկանց փրկելու համար: Այդ աշխատանքին անմասն չի մնում Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի հիվանդանոցի կորոնավիրուսի բաժանմունքը, որը ղեկավարում է Գևորգ Ստեփանյանը: Մենք միշտ բժշկին դիմում ենք, երբ արդեն շատ ուշ է, դա մեր սովորությունն է, որը բացասական դեր է խաղում այսօրվա համաճարակի պայմաններում, քանի որ այն հաշված ժամերի ընթացքում կարող է ախտահարել մարդու օրգանները, և մարդը մեծ հավանականությամբ կարող է հրաժեշտ տալ կյանքին: Գևորգ Ստեփանյանը և բաժանմունքի անձնակազմը փորձում են անհնարինը դարձնել հնարավոր:

Դու կարող ես լինել մասնագետ քո բնագավառում, դա գովելի է, բայց երբ դու և՜ կազմակերպիչ ես, և՜ լավ մասնագետ, ուրեմն ավելի կմեծանան հիվանդի առողջանալու հնարավորությունները:

Մեր մարզի հիվանդ բնակիչներին տրվել է բուժվելու լավ հնարավորություն, քանի որ մենք ունենք կազմակերպված, մասնագիտացված և աշխատանքային փորձով հարուստ կոլեկտիվ՝ բժիշկներից մինչև մաքրուհիներ:

Հարգելի՜ ծնողներ և ուսուցիչներ, տվեք հնարավորություն ձեր երեխաներին, որ իրենք իրենց գտնեն կյանքում, մի՜ նյութականացրեք ամեն ինչ, միշտ իմացեք՝ նախ մենք պետք է արժանին տանք աշխարհին, հետո նոր մեր արժանիքների դիմաց ստանանք:

Հարգելի՜ երեխաներ, օրինակ վերցրեք Գևորգ Ստեփանյանից և իր կոլեկտիվից, փորձեք բարձրանալ կյանքի և առողջության քաղաքակրթության վերջին սանդուղքը, իսկ Սևանի կորոնավիրուսային բաժանմունքի կոլեկտիվը գիշեր ու ցերեկ փրկում է կյանքեր, այդ թվում և իմը:

«1+1» դպրոցական թերթի
գլխավոր խմբագիր
Մարտին Թովմասյան

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Թեժ կռվի պահին ընկերներից մեկը գոռում է, թե Արսենն ընկավ: Հրամանատարը, տեսնելով Արսենի կրծքավանդակից հոսող արյունը, նրան գրկած փորձում է տեղափոխել և այդ ժամանակ վիրավորվում է նաև ինքը: Վերջին անգամ մոր հետ խոսելիս ասել էր՝ մնաց 98 օր, սակայն շրջափակման մեջ ընկնելով 98-երորդ օրը նա անմահացավ բեկորային վնասվածքից: Երազանքները մնացին կիսատ:

Հերոս Տիգրան Արշակյանի նախնիները եկել են Մուշից: Նա իր պապերի արժանի զավակն էր և անմահացավ, որ մենք խաղաղ ապրենք: Արշակյանները հասարակության արժանի մարդիկ են, պատվով են դուրս գալիս բոլոր փորձություններից, մասնագիտացված են թե՜ գյուղատնտեսության, թե՜ շինարարության և թե՜ բժշկության մեջ:

«Տիգրան Մեծ»,- այդպես նրան բնորոշեց դպրոցի տնօրեն պարոն Ալոյանը,- նա առաջնորդ էր, խելացի, մարդամոտ, ընկերասեր, վայելում էր հասարակության սերը և հարգանքը: Դասավանդող ուսուցիչները նրան որակավորում են որպես լավ վարքի տեր աշակերտ, նպատակասլաց էր, ձգտում էր ինքնուրույն հասնել իր նպատակներին: Շատ է սիրել մեքենա վարել, հմուտ վարորդ է եղել, մարտական գործողություններից հետո թշնամու թողած մեքենաներից մեկը բերում է և ասում, որ սա իրենց պետք է գալու: Ցանկացած իրավիճակից դուրս գալու ելք է կարողացել գտնել: Ընկերները պատմում են, որ երբ ԱԹՍ-ն սկսել է հրետակոծել, իրենք նահանջել են՝ թողնելով այնտեղ իրենց զենքը, սակայն գիշերը Տիգրանը ընկերոջ հետ կարողացել է մոտենալ զենքին և նրա վրայից հանել կարևոր դետալը և հետ բերել: Տիգրանը ոտքից վիրավորվում է, այդ վիճակում «ՈՒԱՁ» մեքենան վարում է 130 կմ և ընկերներին հասցնում փոքր հոսպիտալ և էլի հետ վերադառնում դիրքեր: Հոկտեմբերի 10-ին երկրորդ անգամ Տիգրանը վիրավորվում է / Արսենի մահանալուց 30 րոպե առաջ /, 4 ընկերներով նրան մեքենայով տեղափոխում են և հենց այդ պահին ԱԹՍ-ն հրթիռակոծում է ամբողջ տարածքը: Ընկերները ասում են, որ միչև այդտեղ էլ Տիգրանի շնորհիվ իրենք փրկվեցին: Ընկերները նրան տեղափոխում են Գորիսի հոսպիտալ, առաջին օգնություն ցուցաբերելուց հետո նրան տեղափոխում են Երևան, սակայն նա գտնվում էր կոմայի մեջ, բայց երբ մայրը ձայն է տալիս, նրա աչքից արցունք է գալիս: Հոկտեմբերի 14-ին նա մահացավ. մայրը կողքին էր:

«Նա շատ ուրախ էր, որ բանակ էր գնալու, քեֆ արեցինք, հիշում եմ, երբ արդեն ճանապարհում էինք, բոլորս լացում էինք. փաթաթվեց ինձ ու ասաց, որ երկու տարին շուտ կանցնի, կծառայի ու կգա»:

Ծառայության ընթացքում ոչ մի անգամ չի բողոքել, շատ ուրախ էր, ծառայությունը շատ լավ էր անցնում, ծառայում էր Մեղրիում: Ես միաժամանակ և՜ հպարտ եմ, և՜ տխուր, որովհետև ինքը իմ ու իմ ընտանիքի հույսն էր, Տիգրանը իմ ամուր թիկունքն էր, ումով ես հպարտացել եմ, հպարտանում եմ ու դեռ հպարտանալու եմ:

Տիգրանի ուսուցչուհիներից մեկը պատմում է, որ նա շատ ընկերասեր էր, ընդունակ էր: Հպարտ ենք մեր Տիգրանով. արցունքները խեղդելով և ցավը թաքցնելով Արշակյանները հորդորում էին, որ համախմբված մնանք, որ հայրենիքը ամենանվիրական բանն է. իրենց որդին անմահացավ, բայց իր հետևից թողեց մաքուր և անաղարտ քաջ զինվորի տոկուն հոգին:

1+1 թերթի խմբագրություն,
Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի
անվան թիվ 1 հիմնական դպրոց

11.qxd 23/12/2020 14:43 Page 3

ԻՄ ՊԱՐՏՔՆ ԵՄ ԿԱՏԱՐՈՒՄ

Ավետիք

Արմեն

Արսեն

Արման

«1 + 1» դպրոցական թերթի խմբագրությունը և Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները ջերմորեն շնորհավորում են Հայոց բանակի անվեհեր հայորդիներ Ավետիք Սևակի Ավետիսյանին, Արմեն Վարդանի Հարոյանին, Արման Վարուժանի Վարդանյանին և Արսեն Արամի Հարոյանին՝ ծննդյան օրվա առթիվ:

Ցանկանում ենք, որ նրանք պատվով կատարեն իրենց պարտականությունները և անփորձանք վերադառնան տուն:

ԱԲՐԱՀԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

Օրերս զրուցեցինք մարտական գործողությունների մասնակից, Պաշտպանության բանակի զինվոր Աբրահամ Այվազյանի հետ, ով վիրավորվելուց հետո բուժվում էր Հայաստանի հոսպիտալներից մեկում: Նա պնդում է, որ ծառայության երկու տարին շատ բան է փոխում մարդու կյանքում. «Նոր ընկերներ ես ձեռք բերում, ու կարող եմ ասել՝ բանակի ծառայության շնորհիվ մենք դառնում ենք իսկական տղամարդ, ու շատ բան է փոխվում մեր գիտակցության մեջ»:

Աբրահամը հոկտեմբերի 14-ին վիրավորում է ստացել, բայց չցանկացավ խոսել այդ մասին. միայն մտածում է շուտ ապաքինվելու և զորամաս վերադառնալու մասին: Աբրահամը նշեց, որ հայրենասեր է այն մարդը, ով այս դժվարին օրերին եղել է զինվորի կողքին:Աբրահամի և մյուս զինվորների շնորհիվ մենք հիմա կանք, ապրում ենք ու խոնարհվում բոլոր նահատակված զինվորների առջև, ովքեր տվեցին իրենց կյանքը, որ մենք ապրենք:

Շնորհակալություն ենք հայտնում Աբրահամի ծնողներին այսպիսի խիզախ, քաջ ու հայրենասեր որդի դաստիարակելու համար:

ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՀԱՅ ԶԻՆՎՈՐ

Օրերս Սերգեյ Աբրահամյանը դարձավ 19 տարեկան: Սերգեյը սովորում է ԳՊՀ-ի ԲՖ-ի համակարգչային ճարտարագիտություն բաժնում: Մեկ կիսամյակ սովորելուց հետո զորակոչվել է բանակ: Ծառայում է Մարտակերտի 5-րդ պաշտպանական գումարտակում:

Պատմում է մայրը.

-Պատերազմից 2 օր առաջ էր իջել դիրքերից. հերթական հերթափոխն էր: Սեպտեմբերի 27-ի առավոտյան զանգեց տուն ու սովորականի պես խոսեց, անջատեց: Հետո իմացա, որ Արցախում լայնամասշտաբ հարձակում է սկսել Ադրբեջանը, ու նա նորից դիրքերում է:

10 օր հետո միայն իմացա, որ զորամասը պայթեցրել են պատերազմի առաջին օրը, իսկ տղաս եղել է զորամասի ներսում: Մինչև հիմա չգիտեմ, թե ինչ հրաշքով է փրկվել, ու այդ ամենը դեռ սկիզբն էր դժոխքի: 44 օր ռազմական ավիացիայի, ԱԹՍ-ների ու չգիտեմ, թե էլ ինչ գերժամանակակից ռազմատեխնիկայի հարվածների տակ կռվեցին ու դիմակայեցին: Այդ 44 օրվա ընթացքում, լինելով առաջնագծում, առանց հերթափոխի, ոչ մի անգամ չեմ հիշում մի օր, որ տրտնջար: Ամեն անգամ ասել է. «Ամեն ինչ նորմալա, ամեն ինչ լավա»: Խոսելու ընթացքում այնպիսի պայթյունների ձայներ էի լսում, որ միայն ֆիլմերում էի լսել, ու ամեն անգամ շտապ անջատում էր հեռախոսը: Իսկ հաջորդ զանգին հավատացնում էր, որ երևի ռացիայի ձայնն եմ լսել, կամ երևի ականջներիս են ձայն տվել: Հեռախոսը անջատելուց հետո տագնապը մեջս էր մտնում մինչև հաջորդ հեռախոսազանգ: Ամեն հեռախոսազանգից ցնցվում էի, վախենում, իսկ այն օրը, երբ չէր զանգում, շունչս պահած կարդում էի զոհվածների անունները:

Թող որ բոլոր զինվորները անփորձանք վերադառնան տուն, և թող որ ոչ մի մայր չսգա իր որդու կորուստը:

Անահիտ Աբրահամյան

ՈՐՎ ԵՆՔ ՄԵՆՔ

Բարև Ձեզ, հարգելի՛ ընթերցողներ, ես ապրում եմ Վարդենիս քաղաքում, հայրս մեկնում է արտագանա սեզոնային աշխատանքի, մայրս զբաղվում է մեր տնամերձ հողամասով, աճեցնում ենք ամեն ինչ, ստացված մթերքը պահածոյացնում ենք ձմեռվա համար:Ունեմ երկու քույր, մեծը արդեն ամուսնացած է, ում ամուսինը հորս հետ մեկնում է արտագնա աշխատանքի, իսկ մյուս քույրս ինձանից փոքր է : Ես սիրում և հարգում եմ իմ ուսուցիչներին, չէի ասի, որ ես շատ լավ եմ սովորում, բայց վատ էլ չեմ սովորում: Մենք ապրում ենք երկհարկանի մեծ տանը, որը ունի շատ սենյակներ, բոլոր սենյակները կահավորված են, բայց ապրում ենք առաջին հարկի սենյակներից մեկում, որտեղ դրված է վառարանը:Ունենք ավտոմեքենա, ցավոք, ես դեռ այն վարելու իրավունք չունեմ: Երբ հայրս վերադառնում է արտագնա աշխատանքից, մայրս տան համար մի նոր բան է առնում, որպեսզի ուրիշներից հետ չմնանք: Անցած տարի վաճառեցինք մեր հին մեքենան և նոր մոդելի մեքենա գնեցինք:

Երբ սկսվեց պատերազմը, հայրս Հայաստանում չէր, ինչպես միշտ, մեկնել էր արտագնա աշխատանքի: ԱԹՍ-ների հարձակումից Վարդենիս քաղաքը խուճապի մեջ էր, բոլորը փնտրում էին ապահով վայր՝ դեպի այլ մարզեր, բարեկամների մոտ: Մենք էլ էինք ուզում գնալ, բայց չստացվեց, քանի որ մեր մեքենայի մարտկոցը ես տվել էի իմ ընկերոջը, ով հովիվ էր և իր ոչխարի հոտի հետ սարերում էր: Երկու օր անց ես հասկացա, որ մենք ճիշտ ենք վարվել և չենք հեռացել մեր տնից. ես շատ եմ սիրում մեր տունը:

Այդ երկու օրը, ինչ մենք տեսանք և լսեցինք, իմ կյանքում շատ բան փոխեցին մինչ այդ կյանքի հանդեպ ունեցած իմ պատկերացումներում:

Պատերազմը ավարտվեց մեր հայրենիքի համար շատ ցավալի ելքով:

Դպրոցում երբ երեխաներով կռվում էինք, ես միշտ թույլի կողմն էի անցնում, երևի դա է պատճառը, որ հիմա ես ավելի քան առաջ զգում եմ պատասխանատվություն մեր հայրենիքի հանդեպ. պատերազմը ցույց տվեց մեր թույլ կողմերը:

Եթե մինչ այդ ինձ հարցնում էին՝ ինչ եմ ուզում դառնալ, ես հակված էի մտածել, որ հորս հետ կմեկնեմ արտագնա աշխատանքի, փող կաշխատեմ, Երևանում բնակարաններ կգնենք, վարձով կտանք, իսկ հիմա...

Չգիտես ինչու, իմ մոտից անհետացավ նյութապաշտական զգացողությունը, իսկ տեղը ամուր մխրճվեց պատասխանատվության զգացումը իմ բարեկամների, համաքաղաքացիների, կարիքավորների և ուղղակի լավ մարդկանց նկատմամբ:

Ես որոշել եմ սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում ու ավելի հասու լինել ճշմարտությանը, քանի որ մեր դասագրքերում ամեն ինչ չէ, որ գրվում է մեր պատմությունից:

Ես որոշել եմ ուսումնասիրել մեր պատմության ոչ միայն դրական, այլ նաև սև և խայտառակ էջերը: Երևի թե նրա համար, որպեսզի հասկանամ՝ո՞վ ենք մենք: Այս հոդվածը գրելուց երկու օր առաջ քույրս ինձ հարցրեց, թե ես ուզու՞մ եմ դառնալ պատմաբան: Ես ընկա մտորումների մեջ. երևի թե պատմաբան դառնալը իմ երազանքը չէ, երևի ինձ պետք է հասկանալ մեր ինքնությունը,

/շարունակությունը՝ էջ 4-ում/

ՆՐԱՆՔ ԶՈՀՎԵՑԻՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Գևորգ

2020 թվականի սեպտեմբերի 27-ի հայ-ադրբեջանաթուրքական պատերազմի մասնակցությանը անմասն չմնացին Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքի որդիները, ովքեր հայրենիքին իրենց պարտքը կատարելիս անմահացան՝ իրենց երազանքները կիսատ թողնելով:

Գևորգ Մարզպետի Գալոյանն ապրում էր հոր,մոր,տատի, քրոջ ու եղբոր հետ: Մանկուց երազել էր կրել զինվորականի համազգեստը, սպասում էր դպրոցը ավարտելուն. միշտ շտապում էր...

Շտապում էր որպե առաջ հասնել դպրոց,մասնակցել վերջին զանգի փորձերին, չէր սիրում ուշանալ ցանկացած հանդիպումից,ամենուր կար, ամենուր նկատելի էր դառնում, լցնում էր օրն իր ներկայությամբ ու իր հումորներով: Խնդրում է դասղեկին, որ վերջին զանգի վերջին խոսքը իրենը լինի, և եղավ...

Գնաց ու դարձավ Ծովազարդի անմահ հերոս:

Շահեն Աշոտիկի Ղարիբյանը անմահացավ՝ իր երազանքները թողնելով Շուշիի ճանապարհին: Ռազմաճակատ մեկնելիս նրա մտքում իր ընտանիքն էր, իր գյուղը,պատերազմի արհավիրքով անցած իր ժողովուրդը: Ծովազարդի հայորդին ևս նվիրեց իր կյանքը հայրենիքին, նվիրեց ու լքեց բոլոր հարազատներին, ընկերներին ու համագյուղացիներին՝ վստահ լինելով, որ մի օր կկատարվի իր երազանքը՝ կիպարտանա Արցախի ազատագրման լուրը զգալով: Հայրենիքը վեր դասեց ամենից, բայց հայրենիքը չխնայեց նրա կյանքը:

Ծովազարդի հողը իր գիրկն առավ նաև ծնունդով արցախցի հերոս էրիկ Գնելի Ավանեսյանին /ծնված 27.12.2000 թվականին/:

Էրիկը 2006-2018թթ. հաճախել է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի Սարգիս Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց: 2018 թվականին ընդունվել է Շուշիի Տեխնոլոգիական համալսարան: 2019 թվականի հունվարի 21-ին զորակոչվել է Արցախի Հանրապետության ՊԲ: Էրիկը պայքարել է մինչև արյան վերջին կաթիլը ու զոհվել 2020 թվականի նոյեմբերի 10-ին:

Էրիկ

Էրիկն ու իր հայրը Արցախյան գոյամարտի ժամանակ պայքարել են նույն դիրքերից: Հայրը՝ Գնելը՝ վիրավորվելով շրջվել է ու ասել որդուն. «Էրի՜կ, ես վիրավոր եմ, զգույշ մնա»:

Շուռ գալով տեսել է, որ որդին արդեն զոհվել է:

Շահեն

Բանիմաց, խելացի ու հայրենասեր հայորդին զոհվել է հանուն հայրենիքի,հանուն թիկունքի ու հանուն խաղաղության: Երբևիցե չմտածելով նահանջի մասին՝զինվորն առաջ է գնացել ու չի խնայել անգամ կյանքը:

Գլուխ ենք խոնարհում բոլոր այն մայրերի առջև, որոնց զավակները անմահացան հանուն մեզ:

1+1թերթի խմբագրություն,
Ծովազարդի միջնակարգ դպրոց


Աննա Գևորգյան

ՈՐՎ ԵՆՔ ՄԵՆՔ

/սկիզբը՝ էջ 3-ում/

իսկ ես ավելի շատ կուզեի դառնալ մարզպետ, աշխատել մեր մարզի զարգացման համար:

Երեկ լսեցի, թե ինչպես հայրս մորս առաջարկեց տեղափոխվել Ռուսաստանի Դաշնություն բնակության, քանի որ այս ծմռանը ինքը չի գալու՝ աշխատանքը չի ավարտել և մյուս կողմից էլ վախենում է, որ համավարակի պատճառով կարող են չվերթեր չլինել:

Հորս այս միտքը իմ պլանների մեջ չի մտնում, բայց ես այդքան էլ չեմ տխրում, քանի որ այս հարցում մայրս գաղափարակից է իմ հետ. դժվար թե հայրիկիս հաջողվի համոզել երկուսիս:

Այս հոդվածի հեղինակը Վարդենիս քաղաքի դպրոցներից մեկի բարձր դասարանի աշակերտներից է, ով ցանկանում է մնալ անհայտ:

ԿՐԻ'Ր ԴԻՄԱԿ, ՓՐԿԻ'Ր ԿՅԱՆՔԵՐ

4
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 12. 2020 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 2000
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1եւ1.հայ , 1u1.am